ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 30 >> 09 2011թ. N: 3304 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԹԻԿԻ N 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՃԳՆԱՎՈՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿ ՃԳՆԱՎՈՐՅԱՆԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Անդրանիկ Ճգնավորյանի 2011 թվականի սեպտեմբերի 26–ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2011 թվականի սեպտեմբերի 30-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի N 1 հատուկ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար Անդրանիկ Ճգնավորյանի լիազորությունները:
2. 2011 թվականի սեպտեմբերի 30-ից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի N 1 հատուկ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Անդրանիկ Ճգնավորյանին՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):

Ա. ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է